

<p><i>Հանարը</i> Թիվ 32 <i>Տիպը</i> Պաշտոնական տեղեկատվություն <i>Սկզբնաղբյուրը</i> ՀՀՊՏ 2007.01.31/7(531) <i>Ընդունող մարմինը</i> Արդարադատության նախարարություն <i>Ստորագրող մարմինը</i> Արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության վարչության պետ <i>Վավերացնող մարմինը</i> <i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i> 10.02.2007</p>	<p><i>Տեսակը</i> Մայր <i>Կարգավիճակը</i> Գործում է <i>Ընդունման վայրը</i> Երևան <i>Ընդունման ամսաթիվը</i> 15.01.2007 <i>Ստորագրման ամսաթիվը</i> 15.01.2007 <i>Վավերացման ամսաթիվը</i> <i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i></p>
--	--

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ (ՀՕ-246-Ն) ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

**Հ Հ Ա Ր Դ Ա Ր Ա Դ Ա Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
 Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Դ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Թիվ 32

15 հունվարի 2007 թվականի

2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՕ-246-Ն) ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ և 91-րդ հոդվածի 5-րդ մասերի պահանջներից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը **հայտնում է, որ՝**

«Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի» 2006 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 69 (524) համարում հրապարակված 2006 թվականի դեկտեմբերի 20-ի «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության (ՀՕ-246-Ն) օրենքն ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝ հունվարի 8-ից, թեև օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետ է նշված 2007 թվականի հունվարի 1-ը, քանի որ այն ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խտտացնող կամ պարտականություններ սահմանող նորմեր է պարունակում:

**Իրավական ակտերի
 փորձաքննության
 վարչության պետ՝**

Կ. Խտրյան